ՀՏԴ : 929:891.981 Զաքարյան+891.981

ԱԼՄԱՍՏ ԶԱՔԱՐՅԱՆ – 100*

Լրացավ գրականագետ, Զարենցի ժառանգության արժանավոր հետազոտող Ալմաստ Գրիգորի Զաքարյանի ծննդյան 100-ամյակը: Մեծ վաստակի տեր մի անուն, որին համապատասխան ընութագրական արտահայտություն որոնելու դեպքում պետք է ասենք գրական աշխատավոր: Փառքի, մրցանակների ու պաշտոնների համար երբեք չպայքարեց. այնպես չէ, որ այդ ամենի կողքով անցավ անտարբեր, պարզապես, ըստ ժամանակի տերերի, այդ ամենը նրա համար չէին:

Ծնվել է 1923 թ. հունվարի 22-ին Նախիջևանի Գողթան գավառի (իր ժամանակ Նախիջևանի ԻՍՍՀ Օրդուբադի շրջան) Փառակա գյուղում: Գյուղի յոթնամյա դպրոցն ավարտելուց հետո կրթությունը շարունակել է Երևանի մանկավարժական ուսումնարանում, որի վերջին կուրսում մեկ տարի ուսուցչություն է արել Վարդենիսի շրջանի Կարմիր Վանք գյուղում: 1940–1944-ին ուսանել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի լեզվագրական բաժանմունքում: 1945-ի հունվարից աշխատանքի է անցել ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ խորհրդային գրականության բաժնում և այնտեղ էլ 2013-ի հուլիսի 28-ին առաջատար գիտաշխատողի կարգավիճակում ավարտել իր կյանքի ուղին: Գրականության ինստիտուտը նրա միակ մայր օջախն էր, և նա իրենով պայմանավորում էր ինստիտուտի պատմությունը:

Գրական գործունեության երկար ճանապարհն Ալ. Զաքարյանը սկսել է որպես լաբորանտ: Աշխատել է ինստիտուտին կից գրական թանգարանում, շփվել գրողների արխիվների հետ, առաջինը մշակել Տերյանի ու Աղայանի ֆոնդերը: Աղբյուրագիտությունն էլ դարձավ նրա գրական պարգևը, և աստիճանաբար դուրս բերեց գրական մայրուղի:

1951-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Սուրեն Սպանդարյանը և գրականության հարցերը», որից հետո, սակայն, ամեն ինչ հարթ չի ընթացել՝ մեկ տարի աշխատանքի չեն ընդունել: Հարցը լուծվել է Շողիկ Սաֆյանի միջնորդությամբ և Ծատուր Աղայանի միջամտությամբ (տե՛ս Ալ. Զաքարյան. Գրականության և պատմության ընթացքները, 1989, էջ 471): Թեկնածուականն առանձին գրքով տպագրվեց 1956-ին (211 էջ): Տպագիր հաջորդ աշխատանքը «Գիտելիք» ընկերության հրատարակած «Սովետահայ գրականության անցած ուղին» աշխատանքն էր (1957, 42 էջ): Հայ գրականության անցած ուղին ի մի բերելու տեսակետից հիշարժան է նախ՝ «1920–

** Ներկայացվել է 26. I. 2023 թ., ընդունվել է տպագրության 23. III. 2023 թ.:*

1940 թթ. «Սովետահայ գրականության ժամանակագրություն (1920–1947)»-ը («Սովետահայ գրականության պրոբլեմներ: Գրական-բանասիրական հետազոտություններ», գիրք 2, 1948, Հ. Ղազարյանի համահեղինակությամբ), այնուհետև՝ «Սովետահայ գրականության տարեգրություն»-ը (1957, 754 էջ, Հ. Ղազարյանի և Ս. Մանուկյանի համահեղինակությամբ): Այստեղ ամբարված թվերն ու փաստերը գրականության պատմական հիմքն էին, որից հետո անցավ նախ՝ ընթացիկ գրականությանը՝ «Ժամանակակից գրականության հարցերից» («Ժամանակակից գրականության հարցեր: Սովետահայ գրականությունը 1961–1962 թթ.») (1964), այնուհետև՝ հայոց բանաստեղծության հանգուցային մի շրջանի ուսումնասիրությանը՝ «XX դարի սկզբի հայոց բանաստեղծությունը» (հ. 1, 1973, 330 էջ, հ. 2, 1977, 440 էջ): Հայ պոեզիայի վաղնջական ակունքներից գալով, դարերի հոլովույթի մեջ զարգացման ուղիները ճշտելով, Աբովյանի «Վերք...»-ով անցած ճանապարհը վերագնահատելով՝ նա ձևակերպում է այն գաղափարական նախադրյալները, որոնք բարձրարվեստ քնարերգության վերածվեցին Թումանյանի, Իսահակյանի, Մեծարենցի, Տերյանի և ժամանակի այլ բանաստեղծների գործերում: Այս աշխատությունն ամբողջական գիրք էր, միայն ծավալի բերումով կիսվեց ու տպագրվեց երկու մասով և դարձավ նրա դոկտորական ատենախոսությունը, որը պաշտպանեց 1976 թվին:

Ակ. Զաքարյանը հետազոտողի այն տեսակն էր, որը ձգտում էր մասը տեսնել ու քննել ամբողջի մեջ, այն է, ինչ կոչվում է համակարգ և համակարգային մտածողություն: Իսկ համակարգն ամբողջն է՝ գրողի ամբողջական վաստակը իր ժամանակի մեջ, գրողը՝ հայ գրականության ամբողջական ընդգրկումով: Այդ իսկ պատճառով նրա թե՛ գրքերի, թե՛ հոդվածների վերնագրերում հաճախակի կարելի է հանդիպել ակունքներ, ավանդներ, պատմություն և համանման բառերի: Այս տեսակետից հիշարժան են նրա «Ավանդների ուժը» (1981, 268 էջ), «Գրական արձագանքներ և հուշեր» (1985, 320 էջ) և «Գրականության և պատմության ընթացքները» (1989, 548 էջ) ժողովածուները, որոնք լի են գրականագիտական ուշագրավ անակնկալներով ու բացահայտումներով: Գրականագետի տեսադաշտում են Հովհ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Վ. Տերյանը, Դ. Դեմիրճյանը, Մ. Արմենը, Ա. Բակունցը, Պ. Սևակը, արվեստի մյուս ոլորտներից՝ Կոմիտասը, Մ. Սարյանը և ուրիշներ: Բոլոր առիթներով նրան առաջնորդել է հայոց ազգային-ազատագրական ոգին, ինչը և դարձավ նրա կազմած «Ազատագրական գաղափարները հայ հրապարակագրության մեջ. 1820–1920» (1982, 596 էջ, համահեղինակ՝ Գ. Հովհաննիսյան) հոդվածների ժողովածուի էությունը:

Այս ամենով հանդերձ Ակ. Զաքարյանն առաջին հերթին մնում է որպես Ե. Չարենցի ժառանգության լավագույն հրատարակիչ և հետազոտող: Նա կազմել է Չարենցի «Երկերի ժողովածու»-ի վեցհատորյակը (1962–1968): Ահա արդեն վեց տասնամյակ է, ինչ այդ հրատարակությունը գիտական ու հանրային շրջանակներում պահպանում է իր նշանակությունը և դարձել է հետագա բազմաթիվ հրատարակությունների սկզբնաղբյուր: Չարենցի նոր նախաձեռնված 13 հատորով «Ամբողջական երկեր»-ի համար այդ հրատարակությունն ունի կողմնորոշիչ նշանակություն: Զաքարյանը մասնակցել է նաև Չարենցի «Անտիպ և չհավաքված երկեր» (1983) ժողովածուի կազմման ու հրատա-

բակության նախապատրաստման աշխատանքներին և միայն վերջում, ինչ-ինչ տարաձայնությունների պատճառով, հեռացել աշխատանքային խմբից:

Ալ. Զաքարյանը խմբագրել է Եղիշե Հովհաննիսյանի կազմած «Հուշեր Եղիշե Չարենցի մասին» (1986, 504 էջ) ժողովածուն և գրել Չարենցի կենսագրական նոր փաստեր շրջանառող շահեկան առաջաբան:

Ալ. Զաքարյանի կազմած Ե. Չարենցի վեցհատորյակն անթերի չէ. կան սխալներ, կան վրիպումներ, կան չբացահայտված իրողություններ, որոնք իր հետագա աշխատանքներում մասամբ նկատել ու վերանայել է և, վեցհատորյակի ու անտիպների հիրավի հերոսական ճանապարհն անցնելուց հետո, նախաձեռնել «Եղիշե Չարենց: Կյանքը, գործը, ժամանակը» բազմահատորյակը: Հասցրեց տպագրել միայն երեք հատոր, որոնք հասնում են մինչև ներառյալ 1927 թվականը (հ. 1, 1997, 968 էջ, հ. 2, 2003, 432 էջ, հ. 3, 2008, 532 էջ): Ասենք, որ անթերի չեն նաև այս հատորները՝ շատ-շատ են ընդարձակ ծավալումները, բուն նյութից անհարկի հեռացումները, ավելորդ զգացմունքային գեղումները, երբեմն նաև՝ ենթադրական վերագրումները: Բայց այս շեղումները, որոնք նաև նրա շարադրանքի ոճական կողմերից են, չնչին բան են այն վիթխարի փաստական աշխատանքի համեմատ, որն արել է նա:

Տպագրված վերջին հատորում մեկ անգամ չէ, որ հեղինակն ակնարկում է առաջիկա նոր հատորի մասին: Սա նշանակում է, որ շարունակվող հատորի նյութը կա, թե ի՞նչ մշակվածությամբ՝ հարց է, բայց կարելի է մասնագիտական հայացքի ներքո այդ թողնները հրատարակել՝ այս դեպքում արդեն որպես գրականագետի անտիպ ժառանգություն:

Թե՛ իր կազմած հատորների ծանոթագրություններում և թե՛ նշված երեք գրքերում Ալ. Զաքարյանը մեծ դեր կատարեց բացահայտելու Չարենցի կյանքի ու ստեղծագործության հետ կապված բազմաթիվ թվեր, անուններ, գործերի գրության հանգամանքներ ու շարժառիթներ, կենսագրական կնճիռներ... Հանդիպեց Չարենցին տեսած բազմաթիվ անձնավորությունների, եղավ Մայկոպի նրա հարազատների տանը, նրանցից հուշեր գրի առավ: Արեց առավելագույնը, ինչ կարող էր: Գրականագետի հետազոտական աշխատանքի մեջ անթափանց մնացին երկու կարևոր պահոցներ՝ Անդրդաշնության արխիվը Թիֆլիսում և Ստալինի, Միկոյանի ֆոնդերը ԽՄԿԿ Կենտկոմի արխիվում. մի բան, որ ԽՍՀՄ-ի համակարգում այն տարիներին հնարավոր էր, հիմա դժվարությունները շատ են:

Ալ. Զաքարյանը մտավ Չարենցի սիրո աշխարհը և ոչ միայն գիտնականի ճշգրտությամբ, այլև վիպասանի գեղարվեստով ու հոգեբանական նրբության ներքին անցումներով բացահայտեց մարդկային թանկ առնչություններ, մոտեցումներ ու հեռացումներ՝ կապված Լեյլիի, Լյուսի Թառայանի, Կարինե Քոթանջյանի և հատկապես՝ Արմենուհի Տիգրանյանի հետ: Այս խոր ապրումների ծնունդ է նրա չհնացող սիրերգությունը, որի զգացմունքային տաք ալիքը հետազոտողը բացահայտում է ահա կենսագրական այսպիսի նուրբ թափանցումներով:

Ալ. Զաքարյանը չի անտեսում Չարենցի հետ կապված ոչ մի մանրամասն՝ մտնում է խորքերը՝ երբեմն նաև հեռանալով փաստից ու իրականությունից: Բանաստեղծին շատ լավ իմանալով՝ այս հատվածներում (օրինակ՝ արտասահմանյան ուղևորության ժամանակ Աթենքում եղած օրերը) ապավինում է

ներքնազգացողությանը, տրամաբանությանը: Ակնհայտորեն հնարավոր է, որ դա այդպես չէ, բայց այս դեպքում արդեն հետաքրքրական է դառնում գրականագետի կերպարը, թե ո՞ւր կհասնի մտքի թռիչքը և ինչո՞ւ:

Արտակարգ հարուստ են Չարենցի առնչությունները իր ժամանակի գրական, մշակութային, կուսակցական, քաղաքական գործիչների հետ: Ավ. Զաքարյանը բացահայտում է Չարենցի ու նրանց հարաբերությունների նախադրյալները՝ առօրյա շփումներից մինչև նրանց կերպարների գեղարվեստական մարմնավորում:

Լավ տիրապետելով մամուլին և արխիվային իրեն հասանելի նյութերին՝ գրականագետը ներկայացնում է նաև Չարենցի գրքերի ու առանձին գործերի մասին անդրադարձները: Այլ խոսքով՝ ձգտում է ստեղծել Չարենցի ամբողջական կերպարը: Ամբողջականին թեև չհասավ, բայց շատ բան այդ ճանապարհին հաստատեց անել:

Չարենցով շատերն էին հետաքրքրվում, մեծ գրողին ուղղված գրականագիտական շատ հայացքներ կային, որոնք վերածվում էին գրքերի, հոդվածների ու զեկուցումների: Շատերն էին օգտվում հատկապես Ավ. Զաքարյանի կազմած հատորներից և անգամ մի պարզ հղումով չէին հիշատակում նրա անունը: Գրականության ինստիտուտում 1971–2000 թթ. համատեղ աշխատանքի ընթացքում նկատել եմ՝ վիրավորանքը զուսպ էր տանում, երբեմն միայն լցված ակնարկ անում այդ մասին. հետո ընտելացավ՝ խմաստուն բնազդը հուշեց, որ յուրաքանչյուր ոք իր առաքելությունն ունի այս անցավոր աշխարհում: Եվ դա աչքի առաջ էր:

Ժամանակակիցներից Զաքարյանի նախասիրած հեղինակը Պ. Սևակն էր: Աչքիս առաջ է, թե ինչպես նորագույն շրջանի հայ գրականության բաժնի սենյակում Հ. Ղազարյանի հետ խմբագրում և տպագրության էր պատրաստում բանաստեղծի անտիպների «Մուտք» (1985, 236 էջ) ժողովածուն: Սևակին նվիրված հոդվածներից բացի, վերջինս նրա համար նաև հեղինակություն էր դեպի Չարենց տանող ճանապարհին: Քանի անգամ է իր դիտարկումները հիմնավորելու նպատակով դիմել Չարենցի 70-ամյակի առթիվ Սևակի «Ե. Չարենցը և արդի գրականությունը» (1967) զեկուցման առանձին դրույթների:

1983–1984 թթ. շարադրեց «Պարույր Սևակ» հուշագրությունը, որի կրճատ տարբերակը տպագրեց «Գրականության և պատմության ընթացքները» գրքում (էջ 447–546): Աչքի առաջ 20 տարվա մարդկային հարաբերությունների կենդանի պատմություն է՝ գրված փաստագրական հաջորդականությամբ, որով ազդարարել է, որ սևակագիտությունն առանց այդ հուշագրության ըստ ամենայնի թերի կլինի: Շատ ափսոս, որ տպագրել է կրճատ տարբերակը՝ միջավայրն խմանալով դուրս թողնելով անուններ և իրողություններ, իսկ դա նշանակում է՝ եկել է այդ հուշագրությունն ամբողջությամբ տպագրելու ժամանակը, մանավանդ որ 2024-ին լրանում է Սևակի ծննդյան 100-ամյակը (զարմանալի զուգադիպությամբ երկուսն էլ ծնվել են հունվար ամսին մեկ տարվա տարբերությամբ): Այդ գրքում կարելի է զետեղել նաև Ավ. Զաքարյանին գրած Պ. Սևակի նամակները, որոնցից հղումներ է անում և Սևակին նվիրված նրա հոդվածները: Կստացվի 100-ամյակին արժանի հրատարակություն:

Ասենք, որ նման էին նաև նրանց աշխատանքային խառնվածքները: Գրում է. «…Պ. Սևակը աշխատանքային հոգեբանությամբ տոհմիկ հայ գյուղացի էր: Մի տարբերությամբ միայն: Գյուղացին, այնուամենայնիվ, ձմռանը հանգստանում էր, Սևակը՝ երբեք: Ինչ էլ պատահած լիներ իրեն, ինչ տրամադրություն էլ ունենար՝ ամեն, ամեն ինչից վերը գործն էր, ամենօրյա աշխատանքը» (նույն տեղում, էջ 458–459): Նաև այս. «Սևակին օրգանապես խորթ էր էժան ու ձանձրալի քարոզչությամբ կարծիք կազմակերպելը ինչպես իր օգտին, այնպես էլ ի վնաս ուրիշների, որի «արվեստին», գրչակիցներից ու քննադատներից ոմանք տիրապետում էին կատարելապես» (նույն տեղում, էջ 499):

Ալ. Զաքարյանը իրական դրվածքով ներկայացնում է գրականության ինստիտուտի գիտական միջավայրը, որտեղ 1963-ի հունվարից աշխատանքի անցավ նաև Սևակը: Աչքի առաջ է վերջինիս ատենախոսության պաշտպանության պատմությունը (1967, 27 հունիս), որը ձգձգումներից հետո ԽՍՀՄ Բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովը (ВАК) *հաստատեց 1970 թ. փետրվարի 13-ին: Զի թաքցնում իր խորին վրդովմունքն առ այն, որ ակադեմիայի անդամների ընտրությունների ժամանակ Սևակին մերժել էին (1971), և չներեց այդ քայլը: Հաջորդեց բանաստեղծի ողբերգական մահը: Ինչպես ասում են՝ համբերության բաժակը լցվեց, և հենց գրականագետ Ալ. Զաքարյանն էլ դարձավ 1971-ին Գրականության ինստիտուտում տնօրենի դեմ ծայր առած գիտական խռովության պարագլուխը, որովհետև հենց նա էլ ընտրվել էր ակադեմիայի անդամ: Խռովության արդյունքում, որն աննախադեպ բան էր այն տարիներին. տնօրենը փոխվեց, եղան կադրային տեղաշարժեր:*

Ալ. Զաքարյանի կերպարի մեջ, ինչպես ասացի, գրական աշխատավորն էր, այն, որ Հրանտ Մաթևոսյանի «Բեռնաձիեր» շարքում իր Ալիսո անունն ունի և որի հակադրությունը խնամված, փայլեցված կրկեսային զամբիկն է կամ հովատակը: Այդպիսի դրվածք էր նաև գիտական հաստատությունում, ուր՝ առավելագույնը լրագրողի իմացություններով չպարված, փայլեցված գրագիտուհին և հայերեն ոչ մի գիրք մինչև վերջ չկարդացած, բայց 50 տարի բաժին ղեկավարած ու ակադեմիկոսի աստիճանի հասած գրագետն ավելի էին գնահատված, քան աշխատանքային վաստակով ծանրաբեռն անշպար, անփայլ, արխիվից նոր դուրս եկած Ալ. Զաքարյանը: Իրենից օգտվողները կարողանում էին կազմակերպել իրենց գրքերի գրախոսությունները, չարենցագետի համբավ ձեռք բերել, իսկ ինքը միշտ ստվերում էր, երբեք իրեն առաջ չգցեց, թեև այդ բնագավառում առաջինն ինքն էր:

Անտարբեր չէր շրջապատի հանդեպ և վերաբերմունքը չէր թաքցնում թե՛ ժողովներում կամ բաժնի նիստերում ելույթների ժամանակ, թե՛ մարդկային առնչություններում: Խիստ էր միջանցքներում պատերին կպած ընթացիկ լրտեսների ու մանկլավիկների հանդեպ, որոնց տարբերում էր առաջին իսկ հայացքից: Կյանք էր մտել ստալինյան հետապնդումների ու հալածանքների երկրորդ ալիքի տարիներին (1949–1951), և փորձը չէր խաբում: Ահա Զաքարյանն անցել է նաև մարդկային հարաբերությունների այս խոչոտությունների միջով, որովհետև յուրաքանչյուր նոր ղեկավար փորձում էր իրենը պարտադրել և Ալ. Զաքարյանին հարմարեցնել թղթային-պայմանագրային ինչ-ինչ պահանջների, իսկ ինքը իր ճանապարհն ուներ, որին հավատարիմ մնաց

մինչև վերջ և իր անավարտ չարենցապատումով փառքով պսակեց գիտական ուղին: Ոչ ոքի մտքով չանցավ ակադեմիայի անդամների հերթական ընտրությունների ժամանակ առաջադրել նաև նրա թեկնածությունը, մինչդեռ նա արժանավորներից էր, բայց երբեք ինքն իրեն չհրեց առաջ:

Նրան նկատողները քիչ էին, և այդ քչերի մեջ էին Մարտիրոս Սարյանը, ով 1950-ականների վերջերին երկու անգամ նկարել է նրան (մատիտանկար, յուղանկար), Ավետիք Իսահակյանը, ով նրան բնորոշել է «սև ադամանդ» մնայուն արտահայտությամբ ...Նկատող-գնահատողներից էր նաև Պարույր Սևակը ...

Բաժնի ուրախ առիթներից մեկն էր՝ շնորհավորանքներ, կենացներ և հանկարծ Ալ. Զաքարյանը երգեց: Երգեց «Ճախարակ»-ը և լավ երգեց՝ արցունքն աչքերին ... Մարդ էր, և ով գիտի այդ պահին մտքով ո՞ւր էր՝ իր կորած ծննդավայր Փառակայո՞ւմ, Չարենցի ու Սևակի բախտի՞ հետ, թե՞ իր հետ: Բնությունը բարեհաճ չէր գտնվել նրա արտաքինի հանդեպ, ինքն էլ գիտեր և ստիպված կատակի էր տալիս, բայց մարդ էր՝ փայլուն դատարկությունների հանդեպ ուղղված իր անթաքույց քամահրանքի ու հպարտ հեգնանքի, իր ցավի և ուրախության հետ. այո՛, նաև ուրախության, որ այդ պահին իր նոր հրատարակած գրքերից մեկի գինեֆոնն էր:

Հարգանք և խոնարհում Ալմաստ Զաքարյանի հիշատակին:

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Բ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ XX դարի հայ գրականության ու մշակույթի պատմություն, Եղիշե Չարենց: Հեղինակ է բազմաթիվ գրքերի ու հոդվածների:
grakanagetgasparyan@mail.ru